ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԿԿ-ԳՀԾՁԲ-20/20

ք. Երևան «11» 05 2020 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Գ. Եգանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Բեսթ Սոֆթ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13900000(Տասներեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կադաստրի կոմիտե	Բեսթ Սոֆթ ՓԲԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	Ք. Երևան Չարենցի 1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 1570004845660100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01568139
Գլխավոր քարտուղարի ժ/պ՝ _____Գ. Եգանյան	Տնօրեն՝ _____Հ. Մարգարյան
Կ.Տ.	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 1
ԿԿ-ԳՀԾՁԲ-20/20 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	48981300/3	Ներկայացված է ստորև	դրամ	13900000	1	Ք. Երևան Արշակունյաց 7	Պայմանագիրը հաշվառվելուց հետո 30 օրացուցային օր

Գնման առարկայի		
h/h	***Անվանումը***	***Տեխնիկական բնութագիրը***
1	ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» (ARPIS) ՆՈՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՎՏՈՄԱՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ և «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՉԱՓԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ	1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *1.1. Սույն բնութագրով սահմանվում են Կադաստրի կոմիտեի «Անշարժ գույքի տեղեկատվական համակարգում» (ARPIS) նոր գնահատման բանաձևերով անշարժ գույքի ավտոմատ գնահատման ու գույքահարկի և հողի հարկի վերաբերյալ տվյալների տրամադրման էլեկտրոնային առցանց ծառայության ստեղծման և «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲ ընկերությանը փոխգործելիության հարթակի միջոցով հասանելիության տրամադրման, չափագրման արդյունքների մուտքագրման հնարավորության տեխնիկական պահանջները:* 1.2. Էլեկտրոնային համակարգում ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն՝ հաշվի առնելով այդ համակարգի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները: 1.3. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է Պատվիրատուին տրամադրվեն որպես ARPIS համակարգի ծրագրային ապահովման ընդլայնումներ /extensions/: 1.4. Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային փոփոխությունների մասով աշխատակազմի վերապատրաստում: 1.5. Ծրագրային փոփոխությունների և լրացումների մշակման և հանձնման համար Կատարողը կներկայացնի հետևյալ փաստաթղթերը, որոնք կհաստատվեն Պատվիրատուի կողմից. ● փոփոխությունների և լրացումների նկարագիրը ● ծրագրային կոդերը (source codes) ● օգտագործողի ձեռնարկ

2. ARPIS էլեկտրոնային համակարգում նոր դասակարգիչների ավելացման և եղած դասակարգիչների լրամշակման

2.1. Էլեկտրոնային համակարգի «Ընդհանուր նկարագիր» բաժնում.

2.1.1. Ավելացնել նոր դասակարգիչ՝ «Միասնական տարածագնահատման գոտի» անվանմամբ պատուհանով: Տվյալ պատուհանը ունի հետևյալ տեսքը.

Տարածագնահատման նոր գոտի

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20

Ծանոթություն՝ նշված գոտիները յուրաքանչյուր գույքային միավորի համար սկզբնական փուլում ընտրվելու է ավտոմատ կերպով: Ծրագրի գործարկումից հետո պետք լինի գոտիների խմբագրման ռեժիմ:

2.2. Էլեկտրոնային համակարգի «Շենքեր» բաժնում.

2.2.1. Կառուցման նյութ՝

Գործող 7 տեսակներին ավելացնել ևս երկուսը՝ «Հիմնակմախքային» և «Խոշորապանել, խոշորաբլոկ» տեսակները:

1	Բազալտ
2	Տուֆ
3	Երկաթբետոն
4	Մետաղ
5	Աղյուս կամ սնամեջ բլոկ
6	Փայտ
7	Խամ քար, կոպտատաշ քար, այլ տեսակի քար
8	Հիմնակմախքային

9	Խոշորապատել, խոշորաբլոկ

Նոր գնահատման բանաձևերի հաշվարկներում կիրառվում են և ծրագրային ապահովումն իրականացվել է հետևյալ տեսակները

1	Հիմնակմաղքային
2	Քար (այդ թվում՝ աղյուս կամ սնամեջ բլոկ)
3	Խոշորապատել, խոշորաբլոկ
4	Այլ նյութ

Հետևաբար ,,Կառուցման նյութ,, 9 տեսակների ընտրման ժամանակ նոր գնահատման համար դրանք համապատասխանեցնել այսպես՝

1	,,Հիմնակմախքային,,	Հիմնակմախքային
2	,,Բազալտ,, , ,,տուֆ,, , ,,աղյուս կամ սնամեջ բլոկ,, , ,,խամ քար, կոպտատաշ քար, այլ տեսակի քար,,	Քար (այդ թվում՝ աղյուս կամ սնամեջ բլոկ)
3	,,Երկաթբետոն,, , ,,Խոշորապատել, խոշորաբլոկ,,	Խոշորապատել, խոշորաբլոկ
4	,,Մետաղ,, , ,,փայտ,,	Այլ նյութ

2.2.2. Միջհարկային ծածկի նյութ՝

Գործող տեսակներ՝

1	Երկաթբետոն
2	Փայտ

Առաջարկվող տեսակներ՝

1	Երկաթբետոն
2	Փայտից կամ այլ նյութից ծածկ

Ծանոթություն՝ ներկայումս գործող մուտքագրված «Փայտ» տեսակը ավտոմատ կերպով ներառվում է առաջարկվող դասակարգչի «Փայտից կամ այլ նյութից ծածկ» տեսակի մեջ:

2.2.3. Տանիքի նյութ՝

Գործող տեսակներ՝

1	Կղմինդր
2	Թիթեղ
3	Շիֆեր
4	Այլ նյութ

Այս գործող տեսակներից «Շիֆեր» տեսակը անվանափոխել՝ «Թերթաքար (շիֆեր)», «Այլ նյութ» տեսակը՝ «Այլ ջրամեկուսիչ նյութ»: Արդյունքում նոր տանիքի նյութի նոր դասակարգիչները կունենան հետևյալ տեսքը

1	Կղմինդր
2	Թիթեղ

3	Թերթաքար (շիֆեր)
4	Այլ ջրամեկուսիչ նյութ

Նոր գնահատման բանաձևերի հաշվարկներում կիրառվում են և ծրագրային ապահովումն իրականացվել է հետևյալ տեսակները

1	Կղմինդր
2	Թիթեղ, այլ ջրամեկուսիչ նյութ
3	Թերթաքար (շիֆեր)

Հետևաբար ,,Տանիքի նյութ,, 4 տեսակների ընտրման ժամանակ նոր գնահատման համար դրանք համապատասխանեցնել այսպես՝

1	Կղմինդր	Կղմինդր
2	Թիթեղ, այլ ջրամեկուսիչ նյութ	Թիթեղ, այլ ջրամեկուսիչ նյութ
3	Թերթաքար (շիֆեր)	Թերթաքար (շիֆեր)

2.2.4. Հարկ՝

Գործող տեսակներ՝

1	Նկուղ
2	Կիսանկուղ
3	Տեխնիկական հարկ
4	Ձեղնահարկ
5	Այլ

Գործող տեսակներին ավելացնել՝ «Տանիքային հարկ» տեսակը
Դասակարգիչները կունենան հետևյալ տեսքը՝

1	Նկուղ
2	Կիսանկուղ
3	Տեխնիկական հարկ
4	Ձեղնահարկ
5	Այլ
6	Տանիքային հարկ

Քանի որ նոր գնահատման բանաձում հաշվարկների համար կիրառվել են հետևյալ դասակարգիչները՝

1	Նկուղ
2	Կիսանկուղ
3	Տանիքային հարկ
4	Ձեղնահարկ
5	Այլ

Հետևաբար «Հարկի» յուրաքանչյուր տեսակ դրանում ընդգրկվում է հետևյալ կերպ՝

1	Նկուղ	Նկուղ
2	Կիսանկուղ	Կիսանկուղ
3	Տեխնիկական հարկ, տանիքային հարկ	Տանիքային հարկ

4	Ձեղնահարկ	Ձեղնահարկ
5	Այլ	Այլ

Ծանոթություն՝ «Շենքեր» բաժնի մյուս դասակարգիչները և դրանց անվանումները մնում են անփոփոխ:

2.3. Էլեկտրոնային համակարգի «Կառուցվածքներ» բաժնում.

2.3.1. Կառուցման նյութ՝

Գործող տեսակներ՝

1	Բազալտ
2	Տուֆ
3	Երկաթբետոն

Գործող տեսակներին ավելացնել՝ «Քար» և «Այլ բետոնյա հիմքով» տեսակները՝

1	Բազալտ
2	Տուֆ
3	Երկաթբետոն
4	Քար
5	Այլ բետոնյա հիմքով

Քանի որ նոր գնահատման բանաձևերում ծրագրային ապահովումն իրականացվել է հետևյալ տեսակների համար

1	Քար, այլ բետոնյա հիմքով
2	Երկաթբետոն

Հետևաբար դասակարգիչների ցանկի յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է՝

1	Բազալտ, տուֆ, քար, այլ բետոնյա հիմքով	Քար, այլ բետոնյա հիմքով
2	Երկաթբետոն	Երկաթբետոն

3. ARPIS էլեկտրոնային համակարգի «Ընդհանուր նկարագիր» պատուհանի փոփխություններ

Էլեկտրոնային համակարգի ներքևամասում ավելանում են հետևյալ պատուհանները՝

Միասնական տարածագնահատման գոտի *

Գյուղատնտեսական հողամասի Ջ.Ե.

238,412	X գնահատման ձև	Արժեքի պատմություն

Անշարժ գույքի հարկման նպատակով

		շուկայականին մոտարկված արժեքը 4,238,412 | X գնահատման ձև | Արժեքի պատմություն Էլեկտրոնային համակարգի «ընդհանուր նկարագիր» բաժնում գործող տարածագնահատման գոտի, Հողամասի Կ.Ա. կամ Ջ.Ե., Շենքի ընդհանուր Կ.Ա. դաշտերը համապատասխան արժեքի փոփոխման պատմություններով մնում են գործող պատուհաններ: Գործող և նոր արժեքի պատմություններում ներառվում են համապատասխան արեքների պատմությունները՝ ըստ համապատասխան գնահատման կարգերի: **4. ARPIS ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՆՈՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎ** ARPIS էլեկտրոնային համակարգի միջոցով նոր գնահատման բանաձևերը (գնահատման մոդելները) հետևյալն են. **4.1. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի գնահատման բանաձև (այսուհետ՝ Model 1):** Այս մոդելի ժամանակ գնահատվում են միայն էլեկտրոնային համակարգում մուտքագրված այն հողամասերը, որոնց «Իրավունքներ և սուբյեկտներ» բաժնում կցված են «Սեփականություն» կամ «Ընդհանուր համատեղ սեփականություն» կամ «Ընդհանուր բաժնային սեփականություն» կամ «Անհատույց օգտագործում» (վերջինիս համար միաժամանակ նաև «Հողամասի տեսակ» դաշտից ընտրված «Պետական հողամաս» արժեքը) իրավունքները և միաժամանակ տվյալ հողամասի համար «Հողամասեր» բաժնում «Նպատ. նշանակություն» դաշտից ընտրված կլինի «Գյուղատնտեսական» արժեքը: Նոր օրենքի ընդունմամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի գնահատման փոփոխություններ չկան, հետևաբար առաջարկում ենք Model 1-ի համար պահպանել գյուղատնտեսական նշանակության հողամասերի գնահատման գործող ծրագրային մոտեցումները: **4.2. Հողամասերի և (կամ) դրանց բարելավումների՝ շինությունների գնահատման բանաձև (այսուհետ՝ Model 2):** Այս մոդելը իրենից ներկայացնում է երկու բաղադրիչների գումար՝ «Հողի արժեք» + «Շենքի արժեք»: Կարող են լինել դեպքեր, որտեղ բացակայի «Հողի արժեք» բաղադրիչը կամ «Շենքի արժեք» բաղադրիչը: **«Հողի արժեք»** բաղադրիչի ձևավորման պայմաններն են կամ գնահատվում են էլեկտրոնային համակարգում մուտքագրված այն հողամասերը, որոնց «Իրավունքներ և սուբյեկտներ» բաժնում կցված են «Սեփականություն» կամ «Ընդհանուր համատեղ սեփականություն» կամ «Ընդհանուր բաժնային սեփականություն» կամ «Անհատույց օգտագործում» (վերջինիս համար միաժամանակ նաև «Հողամասի տեսակ» դաշտից ընտրված «Պետական հողամաս» արժեքը) իրավունքները բացառությամբ՝ 1.1. Model 1-ում նշված հողամասերի, 1.2. այն հողամասերի, որոնց համար տվյալ գույքային միավորում «Շենքեր» բաժնում մուտքագրված առնվազն 1 շենքի համար «Տեսակ» դաշտից ընտրված կլինի «Բազմաբնակարան շենքի ծավալում» արժեքը, բացառությամբ եթե տվյալ միավորի առնվազն 1 շենքի համար «Օգտագործման նպատակ» դաշտից ըրտրված կլինի «Բազմաբնակարան բնակելի շենք» կամ «Կառուցվող բազմաբնակարան շենք» կամ «Հանրակացարան» արժեքները: 1.3. այն հողամասերի, որոնց կադաստրային ծածկագիրը կկրկնվի 30 և ավելի այլ գույքային միավորներում մուտքագրված հողամասերի ծածկագրերին: **«Շենքի արժեք»** բաղադրիչի ձևավորման պայմաններն են կամ գնահատվում են էլեկտրոնային համակարգում մուտքագրված այն գույքային միավորները, որոնց համար էլեկտրոնային համակարգում մուտքագրված առնվազն 1 շենքին կամ առնվազն 1 կառուցվածքի «Իրավունքներ և սուբյեկտներ» բաժնում կցված կլինի «Սեփականություն» կամ «Ընդհանուր համատեղ սեփականություն» կամ

«Ընդհանուր բաժնային սեփականություն» կամ «Կառուցապատողի իրավունք կամ ինքնակամ շինություններ» իրավունքի տեսակը, բացառությամբ այն գույքային միավորների, որոնց համար՝

2.1. «Շենքեր» բաժնում մուտքագրված առնվազն 1 շենքի համար «Տեսակ» դաշտից ընտրված կլինի «Բազմաբնակարան շենքի ծավալում» արժեքը, բացառությամբ՝ այն գույքային միավորների, որոնցում մուտքագրված առնվազն 1 շենքի համար «Օգտագործման նպատակ» դաշտից ընտրված կլինի «Բազմաբնակարան բնակելի շենք» կամ «Կառուցվող բազմաբնակարան շենք» կամ «Հանրակացարան» արժեքները:

Այս մոդելի արժեքի հաշվարկման բանաձևը հետևյալն է.

$$Ա=Ա_հ + Ա_շ$$

որտեղ՝

Ա – գույքի ընդհանուր արժեքն է,

$Ա_հ$ – հողի արժեքն է կամ **«Հողի արժեք»** բաղադրիչը,

$Ա_շ$ – շինության արժեքն է կամ **«Շենքի արժեք»** բաղադրիչը:

$Ա_հ$ հողի արժեքը կամ **«Հողի արժեք»** բաղադրիչը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա_հ=Ա_{բհ} \times Մ_հ \times Գ_գ$$

որտեղ՝

$Ա_{բհ}$ – հողի բազային արժեքն է:

Հողի բազային արժեքը՝ ըստ մեր կողմից նոր գնահատման բոլոր դասակարգիչների վերաբերյալ տրամադրված տեխնիկական նկարագրի (այսուհետ՝ դասակարգիչների նկարագիր) 1-ին կետի կազմում է «330,000»:

$Մ_հ$ – հողամասի մակերեսն է: Էլեկտրոնային համակարգում մուտքագրված յուրաքանչյուր գույքային միավորի համար՝ **«Հողի արժեք»** բաղադրիչի ձևավորման վերը նշված պայմաններին համապատասխան:

Յուրաքանչյուր գույքային միավորի համար հողամասի մակերեսը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$Մ_հ = Մ_1 + Մ_2 + ... + Մ_n$$

որտեղ, $Մ_1$, $Մ_2$, $Մ_n$ – ը գույքային միավորում մուտքագրված հողամասերն են: Գույքային միավորում մուտքագրված յուրաքանչյուր հողամասի կադաստրային ծածկագիր համեմատվում է այլ գույքային միավորներում մուտքագրված հողամասերի կադաստրային ծածկագրերի հետ, համեմատման արդյունքում՝

ա) եթե այդ ծածկագիրը չի համընկնում այլ գույքային միավորներում մուտքագրված հողամասերի կադաստրային ծածկագրերին, ապա որպես հողամասի մակերեսի չափ է ընտրվում տվյալ հողամասի համար մուտքագրված հողամասի մակերեսը,

բ) եթե այդ ծածկագիրը համընկնում է այլ գույքային միավորներում մուտքագրված հողամասերի կադաստրային ծածկագրերի հետ և միաժամանակ այդ հողամասին «Իրավունքներ և սուբյեկտներ» բաժնում կցված համապատասխան իրավունքին կցված **բոլոր** սուբյեկտներին բաժնեմասի չափ ընտրված չի լինի, ապա տվյալ գույքային միավորի համար մուտքագրված համապատասխան հողամասի չափ է համարվում տվյալ միավորում մուտքագրված հողամասի չափը բաժանած կադաստրային ծածկագիրը համընկնած գույքային միավորների քանակին (քանակի հաշվարկման ժամանակ դիտարկվում է նաև տվյալ գույքային միավորը): Հակառակ դեպքում, եթե այդ իրավունքին կցված առնվազն 1 սուբյեկտի համար ընտրված կլինի բաժնեմասի չափ, ապա տվյալ գույքային միավորի մուտքագրված տվյալ հողամասի չափը բազմապատկվում է այդ հողամասին կցված բոլոր սուբյեկտների համար ընտրված բաժնեմասերի հանրագումարին:

Օրինակ՝ ունենք գույքային միավոր, որի համար հողամասեր բաժնում մուտքագրված են 6 հողամասեր հետևյալ տվյալներով.

հ/հ	Հողամասի չափ	Կադաստրային ծածկագիր	Տվյալ գիրի	Նպատակային նշանակու	Հողամասին կցված իրավունքի	Տվյալ հողամասին կցված

		իր	համընկնումը այլ գույքային միավորներում	թյուն	տեսակը	սուբյեկտները
1	0.06 հա	01-006-0124-0025	0	բնակավայրերի	ընդհանուր բաժնային սեփականություն	Արման Կարապետյան 1/2 Պետրոս Կամսարյան 1/2
2	0.09 հա	01-006-0124-0010	2	բնակավայրերի	ընդհանուր համատեղ սեփականություն	Գրիգոր Գրիգորյան Վարդգես Պետրոսյան
3	0.1 հա	01-006-0124-0005	35	հատուկ նշանակության	ընդհանուր բաժնային սեփականություն	Համլետ Կիրակոսյան 13/60
4	0.2 հա	01-006-0124-0097	0	գյուղատնտեսական	սեփականություն	Նելլի Վարդանյան
5	0.04 հա	01-006-0124-0458	3	բնակավայրերի	ընդհանուր բաժնային սեփականություն	Արամ Կիրակոսյան 1/3 Վարդան Վարդանյան 1/6
6	0.08 հա	01-006-0124-0241	0	բնակավայրերի	վարձակալություն	Մարինե Կիրակոսյան

Տվյալ օրինակի դեպքում հողամասի մակերեսը հավասար է՝

$Մ = Մ_1 + Մ_2 + Մ_3 + Մ_4 + Մ_5 + Մ_6$

Տվյալ մոդելի **«Հողի արժեք»** բաղադրիչի ձևավորման պայմաններին համապատասխան՝ $Մ_3$ հավասարվում է 0, քանի որ բավարարում է 1.3. կետի պայմանին, այսինքն տվյալ հողամասի կադաստրային ծածկագիրը կրկնվում է 30 և ավելի այլ գույքային միավորներում հողամասերի ծածկագրերի հետ: $Մ_4$ հավասարվում է 0, քանի որ բավարարում է 1.1. կետի պայմանին և համարվում է Model 1-ով գնահատվող հողամաս: $Մ_6$ հավասարվում է 0, քանի որ չի բավարարում **«Հողի արժեք»** բաղադրիչի ձևավորման պայմաններին, այն է՝ տվյալ հողամասին կցված իրավունքի տեսակն է «Վարձակալություն», իսկ տվյալ մոդելով գնահատվում են էլեկտրոնային համակարգում մուտքագրված այն հողամասերը, որոնց «Իրավունքներ և սուբյեկտներ» բաժնում կցված են «Սեփականություն» կամ «Ընդհանուր համատեղ սեփականություն» կամ «Ընդհանուր բաժնային սեփականություն» կամ «Անհատույց օգտագործում» (վերջինիս համար միաժամանակ նաև «Հողամասի տեսակ» դաշտից ընտրված «Պետական հողամաս» արժեքը) իրավունքի տեսակը:

$Մ_1$ = **0.06**, քանի որ ա) կետի համաձայն տվյալ հողամասի կադաստրային ծածկագիրը չի համընկնում այլ գույքային միավորներում մուտքագրված հողամասերի կադաստրային ծածկագրերին և որպես հողամասի մակերեսի չափ է

ընտրվում տվյալ հողամասի համար մուտքագրված հողամասի մակերեսը:

$Մ_2$ = 0.09 : 3 = 0.03, քանի որ տվյալ հողամասի կադաստրային ծածկագիր կրկնվում է ևս 2 այլ գույքային միավորներում մուտքագրված կադաստրային ծածկագրերին (2-ը այլ գույքային միավորներում կրկնվող, իսկ 1-ը տվյալ միավորը՝ 2+1) և միաժամանակ տվյալ գույքային միավորի համար համապատասխան իրավունքին կցված սուբյեկտներից ոչ մեկի համար բաժնեմաս առկա չէ:

$Մ_5$ = 0.04 * (1/3 + 1/6) = 0.04 * 3/6 = 0.02

Այսպիսով տվյալ գույքային միավորի համար գնահատման ենթակա հողամասի ընդհանուր մակերեսը հավասար կլինի՝

$Մ = Մ_1 + Մ_2 + Մ_5$ = 0.06 + 0.03 + 0.02 = 0.11

Ծանոթություն՝ տվյալ օրինակը մատչելի ներկայացնելու համար չենք դիտարկել տվյալ միավորում մուտքագրված շինության առկայությունը կամ դրա «բազմաբնակարան շենքի ծավալում» գտնվելու առկայությունը:

Հողամասի արժեքի որոշման բանաձևում վերջին կոմպոնենտը դա $Գ_գ$ – և է՝ հողամասի տարածագնահատման գոտիականության գործակիցը, որը դասակարգիչների նկարագրում ներկայացված է թիվ 3 համարակալմամբ և այդ գործակիցները հետևյալն են.

1	1.0
2	0.65
3	0.4225
4	0.27463
5	0.17851
6	0.11603
7	0.07542
8	0.04902
9	0.03186
10	0.02071
11	0.01346
12	0.00875
13	0.00569
14	0.00370
15	0.00240
16	0.00156
17	0.00102
18	0.00066
19	0.00043
20	0.00028

$Ա_2$ – շինության արժեքը կամ **«Շենքի արժեք»** բաղադրիչը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա_2 = (Ա_1 + Ա_2 + ... + Ա_n) + (Ա_{բշ} \times Գ_{ծա} \times Մ_ծ \times Գ_{մծ} \times Գ_և \times Գ_գ) + (Ա_{բշ} \times Գ_{պա} \times Մ_պ \times Գ_{մպ} \times Գ_և \times Գ_գ)$$

Բանաձևի առաջին գումարելին՝ $(Ա_1 + Ա_2 + ... + Ա_n)$ դա վերաբերվում է էլեկտրոնային համակարգի «Շենքեր» բաժնում մուտքագրված շենքերի արժեքին, երկրորդ գումարելին՝ $(Ա_{բշ} \times Գ_{ծա} \times Մ_ծ \times Գ_{մծ} \times Գ_և \times Գ_գ)$ «Կառուցվածքներ» բաժնում մուտքագրված ծածկերի ու շվաքարանների գնահատմանը (այս բաժնում մուտքագրված հարթակները չեն գնահատվում), իսկ երրորդ գումարելին՝ $(Ա_{բշ} \times Գ_{պա} \times Մ_պ \times Գ_{մպ} \times Գ_և \times Գ_գ)$ «Կառուցվածքներ» բաժնում մուտքագրված պարիսպների գնահատմանը:

$Ա_1, Ա_2, ... Ա_n$ – արժեքները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$Ա_n = Ա_{բշ} \times Մ_2 \times Գ_{նտ} \times Գ_ա \times Գ_ծ \times Գ_տ \times Գ_{ահ} \times Գ_բ \times Գ_հ \times Գ_օ \times Գ_վ \times Գ_մ \times Գ_և \times Գ_գ$$

$Ա_1, Ա_2, ... Ա_n$ – արժեքները՝ դրանք նկուղի, կիսանկուղի, ձեղնահարկի, տանիքային

		հարկի, առաջին, երկրորդ և հաջորդ հարկերի (այդ թվում նաև բաց պատշգամբների) արժեքներն են կամ այսպես ասած «Շենքեր» բաժնում մուտքագրված բոլոր շենքերի ըստ շենքի մասերի արժեքներն են: Ցուրաքանչյուր շենքի մաս գնահատվում է առանձին՝ տվյալ շենքի մասի համար մուտքագրված տվյալներին համապատասխան: **Ծանոթություն՝** քանի որ տվյալ շենքի մասին կից «Բաց պատշգամբները» գնահատվում են նույն կարգով ինչ որ տվյալ շենքի մասը, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ շենքի մասին համար մուտքագրված «Բաց պատշգամբի» համար «Շենքեր» բաժնի շենքի մասի «Բաց պատշգամբներ կամ հարթակներ» դաշտում լրացվում են միայն դրա մակերեսը և կառուցման տարեթիվը, ապա դրա արժեքի հաշվարկման բանաձևում կիրառվող մյուս բոլոր չափորոշիչների համար կիրառվում են տվյալ շենքի մասի (որի կազմում մուտքագրված է այդ «Բաց պատշգամբը») մուտքագրման տվյալները: $Ա_{բշ}$ – ն դա շինության բազային արժեքն է՝ դասակարգիչների նկարագրում թիվ 2 համարակալմամբ և այդ արժեքը կազմում է «700,000»: $Մ_շ$ – ն գնահատվող շենքի մասի և տվյալ շենքի մասի համար «Բաց պատշգամբներ կամ հարթակներ» դաշտում մուտքարում լինելու դեպքում «Բաց պատշգամբի» մակերեսն է, որոնք համապատասխանաբար ընտրվում են «Շենքեր» բաժնի շենքի մասեր դաշտի «Մակերես չափը (ք.մ.)» դաշտից, իսկ բաց պատշգամբների դեպքում՝ «Բաց պատշգամբներ կամ հարթակներ» մասի «Մակերես (ք.մ.)» դաշտից: **Ծանոթություն՝** եթե «Շենքեր» բաժնում մուտքագրված շենքի մասի համար «Շենքի մասեր» պատուհանի «Սեփականատերերի քանակ» դաշտում ընտրված է «2» և ավելի արժեք (այսինքն տվյալ դաշտի արժեքը մեծ կլինի 1-ից), ապա տվյալ դեպքում համապատասխան շենքի մասի «Մակերեսի չափը (ք.մ.)» դաշտի, ինչպես նաև տվյալ շենքի մասի համար «Բաց պատշգամբներ կամ հարթակներ» դաշտում «Մակերես (ք.մ.)» դաշտի արժեքները բաժանվում են «Սեփականատերերի քանակ» դաշտում ընտրված արժեքի վրա (մինիմում «2»-ի վրա): $Գ_{նտ}$ – ն շինության կառուցման նյութից տեսակից հետ կապված գործակիցն է: Շինության կառուցման նյութի տեսակները ներկայացված են դասակարգիչների նկարագրում թիվ 10 համարակալմամբ: Model 2 գնահատման մոդելում շինության նյութի տեսակի հետ կապված գործակիցները հետևյալն են՝ | 1 | Հիմնակմաղքային | 0.6 | | 2 | Քար (այդ թվում՝ աղյուս կամ սնամեջ բլոկ) | 0.6 | | 3 | Խոշորապանել, խոշորաբլոկ | 0.5 | | 4 | Այլ նյութ | 0.48 | $Գ_{ա}$ – ն շինության ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցն է: Շինության ըստ շենքի մասի ավարտվածության աստիճանը՝ դա «Շենքեր» բաժնի շենքի մասեր պատուհանում շենքի մասի համար «Ավարտվածության աստիճան» դաշտից ընտրված արժեքն է: Ավարտվածության աստիճանի տեսակները ներկայացված են դասակարգիչների նկարագրում թիվ 8 համարակալմամբ և այս մոդելի գնահատման ժամանակ կիրառվում են հետևյալ գործակիցները՝ | 1 | Անավարտ | 0 | | 2 | Մինչև 50 տոկոս | 0.5 | | 3 | 50-ից 80 տոկոս | 0.7 | | 4 | 80 և ավելի տոկոս | 1.0 | $Գ_{ծ}$ – ն շինության միջհարկային ծածկի տեսակի հետ կապված գործակիցն է: Շինության ըստ շենքի մասի միջհարկային ծածկի տեսակը՝ դա «Շենքեր» բաժնի շենքի մասեր պատուհանում շենքի մասի համար «Միջհարկային ծածկի նյութ» դաշտից ընտրված արժեքն է: Միջհարկային ծածկի տեսակները ներկայացված են դասակարգիչների նկարագրում թիվ 11 համարակալմամբ և այս մոդելի

գնահատման ժամանակ կիրառվում են հետևյալ գործակիցները՝

1	Երկաթբետոն	1.0
2	Փայտից կամ այլ նյութից ծածկ	0.85

$Գ_{տ}$ – ն շինության տանիքի նյութի գործակիցն է: Այս գործակիցը կիրառվում է միայն շինության վերջին հարկի համար: Շինության ըստ շենքի մասի տանիքի նյութի տեսակը՝ դա «Շենքեր» բաժնի շենքի մասեր պատուհանում շենքի մասի համար «Տանիքի նյութ» դաշտից ընտրված արժեքն է: Այս դաշտը ակտիվ է լինում, եթե տվյալ շենքի մասի համար «Վերջին հարկ» դաշտում առկա է նշագրում (կամ ընտրված է վերջին հարկ): Տանիքի նյութի տեսակները ներկայացված են դասակարգիչների նկարագրում թիվ 12 համարակալմամբ և այս մոդելի գնահատման ժամանակ կիրառվում են հետևյալ գործակիցները՝

1	Կղմինդր	1.0
2	Թիթեղ, այլ ջրամեկուսիչ նյութ	0.9
3	Թերթաքար (շիֆեր)	0.8

$Գ_{ահ}$ – ն շինության արտաքին հարդարման հետ կապված գործակիցն է: Շինության ըստ շենքի մասի արտաքին հարդարման տեսակը՝ դա «Շենքեր» բաժնի շենքի մասեր պատուհանում շենքի մասի համար «Արտաքին հարդարում» դաշտից (ըստ կողմերի) ընտրված արժեքն է: Շինության արտաքին հարդարման տեսակները ներկայացված են դասակարգիչների նկարագրում թիվ 9 համարակալմամբ և այս մոդելի գնահատման ժամանակ կիրառվում են հետևյալ գործակիցները՝

1	Առանց արտաքին հարդարման	1.0
2	Սրբատաշ	1.04
3	Ապակեպատ	1.04
4	Երեսապատված	1.04
5	Սվաղած	1.01

Ծանոթություն՝ շենքի մասի համար արտաքին ճակատների ընդհանուր քանակը կազմում է 4: Արտաքին հարդարման գործակիցը որոշելու համար այդ բոլոր 4 կողմերի գործակիցները բազմապատկվում են և ստացվում է արտաքին հարդարման վերջնական գործակիցը: Օրինակ՝ շենքի մասի համար մուտքագրված է 1 կողմ ապակեպատ, 2 կողմ սվաղած և 1 կողմ առանց արտաքին հարդարման: Այդ դեպքում տվյալ շենքի մասի արտաքին հարդարման գործակիցը որոշվում է հետևյալ կերպ՝ **$Գ_{ահ}$ =1.04 (1 կողմ ապակեպատի գործակիցը) x 1.01 x 1.01 (2 կողմերը սվաղած) x 1.0 (1 կողմ առանց արտաքին հարդարման) = 1.0609:**

Ծանոթություն՝ եթե գույքային միավորի համար «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Շենքի նպտ. նշն.» դաշտից ընտրվել է «Արտադրական» արժեքը, ապա «Շենքեր» բաժնում մուտքագրված բոլոր շենքերի մասերի համար արպես արտաքին հարդարման գործակից է կիրառվում «Առանց արտաքին հարդարման» համար սահմանված «1.0» գործակիցը՝ բոլոր 4 կողմերի համար, այսինքն արտաքին հարդաման գործակիցը այդ դեպքերում հավասարվում է «1.0»: Նույնը նաև այն շենքի մասերի համար, որոնց համար «Շենքեր» բաժնի «Շենքի մասեր» պատուհանի «Հարկ» ընտրման դաշտից ընտրված կլինի «Նկուղ» արժեքը

$Գ_{բ}$ – ն շինության բարձրության գործակիցն է: Շինության ըստ շենքի մասի բարձրությունը՝ դա «Շենքեր» բաժնի շենքի մասեր պատուհանում շենքի մասի համար «Ներքին բարձրություն» դաշտից ընտրված արժեքն է: Այս մոդելի գնահատման ժամանակ՝ կախված «Ներքին բարձրություն» դաշտից ընտրված արժեքից շենքի մասի համար կիրառվում են հետևյալ գործակիցները՝

մինչև 2.6 մետր (ներառյալ)	0.9

2.6 մետրից մինչև 2.9 մետր (ներառյալ)	0.95
2.9 մետրից մինչև 3.5 մետր (ներառյալ)	1.0
3.5 մետրից մինչև 5.0 մետր (ներառյալ)	1.15
5.0 մետրից մինչև 8.0 մետր (ներառյալ)	1.4
8.0 մետրից մինչև 12.0 մետր (ներառյալ)	1.8
12.0 մետրից ավելի	2.3

$Գ_հ$ – ն շինության հարկայնության գործակիցն է: Շինության ըստ շենքի մասի հարկայնության տեսակը՝ դա «Շենքեր» բաժնի շենքի մասեր պատուհանում շենքի մասի համար «Հարկ» դաշտից ընտրված արժեքն է: Տվյալ դաշտում առկա նաև «Այլ» տեսակը, որի ընտրված լինելու դեպքում հարկայնության տեսակը արտահատվում է կից պատուհանում՝ թվային տեսքով: Շինության հարկայնության տեսակները ներկայացված են դասակարգիչների նկարագրում թիվ 7 համարակալմամբ:

Այս գնահատման մոդելում կախված շինության նպատակային նշանակությունից կիրառվում են տարբեր հարկայնության գործակիցներ, մասնավորապես՝

ա) եթե գույքային միավորի համար էլեկտրոնային համակարգի «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Շենքի նպտ. նշն.» դաշտից ընտրված է «Բնակելի» արժեքը, ապա շենքի տվյալ մասի հարկայնության գործակիցները հետևյալն են՝

առաջին և հաջորդ հարկերի համար	1.0
կիսանկուղային հարկի, ձեղնահարկի (տանիքային հարկի) համար	0.8
նկուղային հարկի համար	0.65

բ) եթե գույքային միավորի համար էլեկտրոնային համակարգի «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Շենքի նպտ. նշն.» դաշտից ընտրված է «Հասարակական» կամ «Արտադրական» արժեքը, ապա շենքի տվյալ մասի հարկայնության գործակիցները հետևյալն են՝

առաջին հարկի համար	1.0
երկրորդ և հաջորդ հարկերի, կիսանկուղային հարկի, ձեղնահարկի (տանիքային հարկի) համար	0.8
նկուղային հարկի համար	0.65

$Գ_օ$ – ն օժանդակ շինության հետ կապված գործակիցն է: Եթե գույքային միավորի համար էլեկտրոնային համակարգի «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Շենքի նպտ. նշն.» դաշտից ընտրված է «Հասարակական» կամ «Արտադրական» արժեքները, ապա տվյալ միավորում մուտքագրված բոլոր շենքերի մասերի համար $Գ_օ$ գործակիցը հավասար է՝ «1.0»:

Եթե գույքային միավորի համար էլեկտրոնային համակարգի «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Շենքի նպտ. նշն.» դաշտից ընտրված է «Բնակելի» արժեքը և միաժամանակ «Շենքեր» բաժնում մուտքագրված շենքի համար «Օգտագործման նպատակ» ցանկից ընտրված են «Բնակելի տուն» կամ «Այգետնակ» կամ «Քոթեջ» կամ «Կառուցվող բնակելի տուն» կամ «Քոթեջատիպ տնակ» կամ «Ամառանոց բնակելի տուն» արժեքները, ապա տվյալ շենքի բոլոր մասերի համար $Գ_օ$ գործակիցը հավասար է՝ «1.0», «Օգտագործման նպատակ» ցանկից ընտրված մնացած տեսակների համար եթե տվյալ շենքի համար «Հիմնական/օժանդակ» դաշտից ընտրված «Հիմնական» արժեքի դեպքում $Գ_օ$ գործակիցը հավասար է՝ «1.0», իսկ «Օժանդակ» արժեքի դեպքում՝ $Գ_օ$ գործակիցը հավասար է՝ «0.5»:

$Գ_վ$ – ն շինության վնասվածության աստիճանը բնութագրող գործակիցն է: Շինության ըստ շենքի մասի վնասվածության աստիճանի տեսակը՝ դա «Շենքեր» բաժնի շենքի մասեր պատուհանում շենքի մասի համար «Վնասվածության աստիճան» դաշտից ընտրված արժեքն է: Վնասվածության աստիճանի տեսակները ներկայացված են դասակարգիչների նկարագրում թիվ 13 համարակալմամբ և այս

		մոդելի գնահատման ժամանակ կիրառվում են հետևյալ գործակիցները՝

1	0 կարգ	1.0
2	1-ին կարգ	0.96
3	2-րդ կարգ	0.96
4	3-րդ կարգ	0.7
5	4-րդ կարգ	0

$Գ_մ$ – ն շինության մաշվածությունը (շահագործման տևողությունը) բնութագրող գործակիցն է և այդ գործակիցը պայմանավորված է շինության կառուցման տարեթվով: Շինության ըստ շենքի մասի կառուցման տարեթիվը՝ դա «Շենքեր» բաժնի շենքի մասեր պատուհանում շենքի մասի համար «Կառուցման տարեթիվ» դաշտից ընտրված արժեքն է: Շենքի մասի կառուցման տարեթվից և շահագործման տևողությունից կախված կիրառվում են մաշվածության հետևյալ գործակիցները՝

մինչև 9 տարի (ներառյալ)	1.0
10-ից 15 տարի (ներառյալ)	0.98
16-ից 21 տարի (ներառյալ)	0.96
22-ից 27 տարի (ներառյալ)	0.94
28-ից 33 տարի (ներառյալ)	0.91
34-ից 39 տարի (ներառյալ)	0.86
40-ից 45 տարի (ներառյալ)	0.81
46 տարի և ավելի	0.76

Ծանոթություն՝ եթե շենքի մասի համար «Շենքեր» բաժնի «Շենքի մասեր» պատուհանի «Ավարտվածության աստիճան» դաշտից ընտրված է «Անավարտ» կամ «Մինչև 50 տոկոս» կամ «50-80 տոկոս» արժեքները, ապա տվյալ շենքի մասի համար մաշվածության գործակից է կիրառվում «մինչև 9 տարի (ներառյալ)»-ի համար սահմանված «1.0» գործակիցը:

Ծանոթություն՝ քանի որ գնահատումը կատարվելու է 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով, հետևաբար որպես ելակետային տարի համարվելու «2019»-ը (շահագործման տևողությունը դիտարկվելու է «2019» արժեքի համեմատությամբ):

